

թիւններն անհամեմատ աւելանում են, և շաբաթ չի անցնում, որ լրագիրները նոր սպանութիւնների գէպքեր չարձանազրին իրանց էջերում, և հայոց պատրիարքարանն էլ նորանոր թակրիրներ չուղարկէ Բ. Դուռն:

Հակառակ այն հանգամանքի, որ կառավարութեանը ներկայացնում են բողոքագրեր, ո՞րագործները դարձեալ մնում են անպատճի ու ազատ և կամ, վկաների բացակայութեան պատճառով, բոլորովին արձակում են և զործ դադարիցնում է... Վերջես, ներքին գործերի նորահաստատմինիստի հրամանով, ձերբակալուածներն էլ աղատ արձակուեցին: Եւ այդ նոր կարգադրութեան որպէս հիմք ծառայել է այն հանգամանքը, որ արդարադառնութեան մինիստրութեան ներկայացնուցիչների կողմից ձերբակալման հրամանագիր չէ տրուած:

19) Օսմ. պետութեան ազգաբնակութեան ընդհանուր թիւը հասնում է 30,000,000-ի: Այդ թուի 1/3-ը քրիստոնեայ ազգաբնակութիւնն է կազմում: Ուստի արդարացի էր յուսաք որ 30 վալիներից զոնէ 10-ը, 129 միւթէսարքիներից 43-ը և 578 կարմակամներից 192-ը քրիստոնեաներ լինէին: Սակայն իրականութիւնը յիշեալ թւերից շատ հեռու է: Օսմ. պետութեան սահմաններում մինչև անգամ մի քրիստոնեայ վալի չը կայ, միայն մի քանի քրիստոնեայ միւթիսարքի ու մօտ 20 կայմակամ կայ ընդամենը, և դրանք էլ, ընդհանրապէս, համարում են թիւրքացած քրիստոնեաներ:

Պարլամենտում, վերոյիշեալ համեմատութեամբ, պէտք է որ 90 քրիստոնեայ մէրուս գտնուէր, մինչդեռ օսմ. ներկայացնուցական ժողովի արդէն լուծված կազմն իր մէջ չունէր այդ վերջին թուի զոնէ կէս մասը: Միւնոյն գիտուութիւնները կարելի է անել և այլ պաշտօնէութեան մասին:

Կ. Պօլսի բժշկական ուսումնարանի առաջին ուսուցիչները հայերն են եղել, և գիտէք այսօր քանի հայ ուսուցիչ կայ այսակեղ... Ոչ մի հատու... Յոյն էլ չը կայ... Եւ այդ նրա համար, որ իթթինադականների քաղաքականութեանն այդպէս է ձեռնուու:

Սանիտարական խորհրդի մէջ էլ չը կայ ոչ մի հայ...: Գուցէ հայերը բժշկականութեան մէջ իրանց ընդունակութիւնները կորցրել են: Համբկան շըջանում նկատելի էր մի սիստեմ. այդ այն է, որ որևէ է պակասած հայ կամ յոյն պաշտօնեայի տեղ նշանակուում էր նոյն ցեղից մի ուրիշը: Սահմանադրութեան հոչակումից յետոյ, իթթինադական լշէիմի օրով, պակասող քրիստոնեաների փոխարէն պաշտօնի են կոչւում իսլամներ: Միթէ եղբայրներ չենք:

ԴԱՐՁԵԱԼ ՔԻՆ ԶԵԽՈՎ

Էջմիածինը նոյնպէս ունի իր աւանդական գործելակերպը և ինչպէս երկրորդ բնութիւն դրանից բաժանուել չի կարողանում առ այժմ, թէև նոր ոյժ և օդնական ոյժիր կամօքն միաբանների արդէն կայ:

Տպագրութեան 400-ամեակի և տառերի գիւտի 1500-ամեակի կրկնակի խոշոր ազգային կուլտուրական առների յօրելեանական հանդէսները դեկայլարելու պատիւն իր վրայ առնելով, էջմիածինը առ այժմ անունով է արգարացնում իր այդ մեծ գերբւ նորընախիր կաթողիկոսի կոնդակով կազմուում է «կենդրոնական յանձնաժողով»: Ասել կուզէ, մինչի այժմ կազմուած յանձնաժողովների մէջ, էջմիածնի յանձնաժողովը զեկավարող գեր ունի և կենդրոնացնելու է իր մէջ մնացեալների գործունէութեան էական մասերը:

Սակայն հէնց յանձնաժողովի անդամներ ընտրելը ցոյց է տալի, որ այդ յանձնաժողովի տարբերութիւնը եղածների մէջ միայն էջմիածնում լինեն է:

Անդամները ընտրուած կամ աւելի ճշշտն ասած նշանակուած են ճեմարանի ուսուցիչներից և էջմիածնի միաբաններից: Ընդունելով հանդերձ, որ այդ բոլորն էլ կըթուած են և արժանիքի աէր, չպէտք է մոռանանք, որ յանձնաժողովը «կենդրոնական» անունն է կըում, հետեւպէս, նրա մէջ լինելու են առնուադն ուսւահայ մտաւորական կենդրոններում կազմուած յանձնաժողովներից ևս ներկայացնուելու ինչու օլինակ Տփխիսի, Բագուի, Երևանի հասարակական-գրական գործիչները գուրսն են մնացել այն մեծ տօնի յօրելեանը ինչ ձևով կատարելու խնդրի որոշումից, որը խիստ մեծ, ընդարձակ նշանակութիւն ունի, որը և գրական և հասարակական խնդիրների հետ է կապուած:

Եւ ի՞նչ բարոյական ազգեցութիւն պիտի ունենայ մի յանձնաժողով, որը կարուած է մեր մտաւոր կեդրոններից, որի մէջ մասնակցութիւն չունին մեր ժողովրդի ներկայացնուեցիչները: Չամէլ, որ դարձեալ հին ձեւ գործելակերպն է իշխում էջմիածնում, չամէլ որ մամուլի ձայնը մնում է անլակիլի էջմիածնում, որ գեռ կամ Մայր Աթոռը շըջապատող հասա պարիսաներ: Պէտք է ի նկատի ունենալ, որ էջմիածինը անկարող է վայելուչ կերպով միայնակ համազգային տօնը

կատարել, թէն իր վրայ է առնում այդ ծանր գործը, իսկ այդ թերութիւնը անշուշտ ի վրաս էջմիածնի հեղինակութեան է լինելու:

Յանձնաժողովը որոշել է տօնը կատարել աշնանք՝ թարգմանչաց տօնի օրը (երեխ հոկտեմբերի 13-ին). Այժմ արդէն մայիսի վերջն է, ամառուայ արձակուրդներին հաւանօրէն յանձնաժողովի անդամները ցըսւելու են գանազան հովատուն վայրեր և սեպատմբերին են կրկին հաւաքուելու, ասել կուզէ, ամենաշատը կարող են գործել ամիս ու կէս. Ի՞նչ կարող են անել այդքան կարճ ժամունակում այնքան մեծ տօնը վայելու կերպով տօնելու համար: Անշուշտ դարձեալ հին ձեռվ մի հանդէս կրկին հովատուն կատարել և եղած մաս կդրուի և եղած մի շարք որոշումները կմնան բարի ցանկութիւններ, որոնք նվազաւած են երբ իրականութեան կսանան, ի՞նչ ձեռվ և արդիօք կիրականանամն: Այդքան հապճեպ կուլտուրական համազգային տօնը կատարող էջմիածնը ցոյց է տալի, որ մի կիրար ուզում է արձագանք տալ համազգային տօնին, որ այդ բնուից ուզում է ազատուել և ոչ թէ իրօք իր գիրքին վայել կիրապով առաջնորդողի դեր կատարել և միւնքներին ևս օրինակ դառնալ:

Միթէ իրօք ոչ մի յոյս չափաք է ունենալ, որ էջմիածնն էլ կրաքենորդուի, որ կթողին հին ձեռերը և ժամանակը ոգին կըմրոնէ:

ԳՈՒԳՈՐԾՅԻ

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄՑԻ ՇՐԻՄՊԸ^(*)

V.

Բարոյական ապականութիւնը ժամանակակից հասարակութեան մէջ այնքան մեծ է լու և ազնիւ մարդկանց բացակայութիւնը այն աստիճան զգալի է, որ նոյնիսկ հասարակութիւնը ինքնուղղութեան յոյսը համարեայ կտրել է իսպառ և մինչև տնտես, եթէ այդ մասին խօսք էլ է լինում, միայն ծիծաղ է շարժում, որպէս անհնարին մի բան:

Բայց այդ անյուսալիութիւնը ոչ թէ անկարելիութեան մէջ է կայանում, այլ նրանումն է, որ հասարակութեան մեծամասնութիւնը չի դարձնում և չի էլ կամենում ուշադրութիւն դար-

ձնել ճշմարտութեան վերայ, որ մեր բարոյական զարգացումը լիովին կախուած է նրանից, որքան մենք այդ զարգացման մասին պիտի աշխատենք:

Եթէ մենք մեր երիտասարդութեան օրեւում մեր զաստիարակների մասնակցութեան շնորհիւ ստացել ենք բարոյական զարգացում, հէնց այդ գէպքումն էլ մեր ինքնտաճաշութեան ապագայ զարգացումը խորհրդածութեան միջոցաւ չափազանց կարևոր է. այլ կիրպ շարունակ կրկնուող աշխարհային զբաղմունքները և նիւթական կարիքների մասին եղած հոգսերը կարող են լնկնել մեր բարոյական ուղղութիւնը իրանց պահանջներով: Բայց երբ երիտասարդութեան օրերում այս կամ այն պատճառներով ընաւին չենք կարողացել իրացնել այդ ուղղութիւնը, որը միշտ կարելի է, և երբէք ուշ չէ մեզ համար, և մինչև անգամ չափազանց անհրաժեշտ է այդ բարոյական կազմի զարգացումը՝ եթէ միայն մենք լաւ մարդ գառնալու ցանկութիւնը ունենայինք: Հասարակութեան վերաբերմամբ այս նպատակին համենելու համար պէտք է խորհելու այնպիսի մի տոիթ գանէին նրանք, որը տանէր նրանց գէպի լաւագոյն բարոյական զարգացումը: Առիթներ գտնելու գլխաւոր հոգսը հարկաւ ընկնում է ամենից առաջ եկեղեցու հովիների վերայ: Բոլորին յայտնի Աւետարանի և Առաքեալների ցոյցը տուած մեծադոյն պալտականութիւնները և այդ պարտականութիւնների ի կատար ածելլ վաւերացրած սրբազան կառավարիչ Անոնդի ձեռուո՞ւ 1881 թուականին ապրիլի 5-ին իր մէկ շրջաբերական հրամանովը խստիւ պատուիրում է եկեղեցու հովիներին՝ որպէս զի նրանք հոգ տանեն իրանց ժողովրդի մէջ Աւետարանի ճշմարտութիւնները տարածելու, որ նրանք հովիները և ուսուցիչները քարոզեն, դաստիարակեն, յանդիմանեն, արգելեն, խնդրեն և այլն: Դժբախտաբար, այդ մեծ շրջաբերականի ի կատար անելու ասթիւ չորոշուեց նսկելու մի աւելի յարմարաւոր միջոց և նա մնաց անկատար:

Ինչպէս յայտնի է, ինտելիգենտ հասարակութեան համար խորհելու սովորական առիթներն հն քաղաքական ու քաղաքացիական կեանքին անցքերը, այլ և այլ գէպքերը. մարդկանց կեանքից առած մասնաւոր պատահարները, յետոյ գրքերը, պարբերական հրատարակութիւնները, լուսադրները, թատրոնները և այլն. իսկ

^(*) Տիս «Լոյս» № 17.